

Տարեկան գինը 10 բուլի. կէս տարւան 6 բուլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանական շահեր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Իզդերից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվեյցարիայից. Սրտաքին լուրեր.—ՀԵՌԱՆԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հիմքը խախտում է:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՇԱՀԵՐ

Այն խորամանկ քաղաքականութիւնը, որ վարում է Գերմանիան, ընդհանուր ուշադրութեան առարկայ էր դարձել: Գերմանիան իւրաքանչիւր ազգին աշխատում է հաւատարման, որ Գերմանիան նրա բնական զաւակն էր և բարեկամն է, և յետոյ օգտւում է բոլորից իր սեփական շահերի համար: Նա այդ շատ հեշտ է իրագործել, որովհետև ազգերի մէջ կան թշնամական դիտումներ և մրցութիւն:

Վերցնելով, օրինակ, Բաղդադի երկաթուղին, Գերմանիան միանգամայն հանդիսանում է իր բարեկամ Ռուսաստանի, Անգլիայի և Թիւրքիայի: Նա Ռուսաստանի բարեկամն է, որովհետև նա թող չը տուէր, որ Ռուսաստանի թշնամի Անգլիան հաստատվի Պարսից Վոյի բերանում և Նիքոսի ստորին հոսանքում: Նա Անգլիայի բարեկամն է, որովհետև նա թող չը տուէր, որ Միջագետքը ընկնի Ռուսաստանի ձեռքը: Նա Թիւրքիայի բարեկամն է, որովհետև ազատեց երկիրը երկաթուղի մրցող ազգերի, Ռուսաստանի և Անգլիայի նուաճումներից: Իսկ մի և նոյն ժամանակ ինքը Գերմանիան փառաւորապէս հաստատվեց երկրի մէջ և սկսում է իրագործել գերմանական արդիւնաբերութիւնն տարածման և գերմանական դադարակնութեան մի խոշոր ծրագիր:

Նոյն գիւղերն է բռնել Գերմանիան և Զիւնաստանում: Նա այնտեղ հաճելի է թէ Ռուսաստանի և թէ Անգլիայի համար, որովհետև երկուսն էլ նպաստում է միմեանց ոյժը կտրելու և նուազեցնելու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԿԱՆՈՒՏ

Միշտ եւ անվերջ զանգառներ են լսվում, թէ մեր գրքերը չեն տարածվում եւ փառում են խառնութիւններ, լրագրիները բաժանորդ չունեն, հասարակութիւնը ընթերցանութեամբ պարզապէս չէ սիրում, նա գրքին տուած փողը կորած է համարում եւ այլն եւ այլն:

Ինչ է այդ բոլորի պատճառը: Միթէ միայն նա հասարակութեան առանձնապատկերն է, որով պէտք է բացատրել այդ երեւոյթը: Ոչ, Որովհետև այստեղ կան եւ ուրիշ պատճառներ, որոնք ոչ մի կապ չունեն ազգայնական առանձնապատկերների հետ:

Այդ պատճառներից ամենապարզը եւ հիմնականը պէտք է համարել այն, որ մեր հասարակական գործը հէնց սկզբից խախտում է իմքերի վրա է դրվել եւ մինչև հիմա էլ չաւելանալով է նոյն ուղղութեամբ: Գլխաւոր սխալը կայանում է նրանում, որ գործի սկիզբը դրողները, առաջնորդվելով «ազգայնական» նպատակներով, գործի հիմքն էլ դրել են «ազգայնական» հողի վրա: Տարիներից ի վեր, չորսիւն անհեռառես խմբագիրների եւ գործիչների, մեր մէջ ըստ է դրել մի վերին աստիճանի վնասակար սովորութիւն—գրական ձրիակերութիւն: Հէնց որ մէկը մի գիրք կամ մի թերթ է հրատարակում, իսկոյն ամեն կողմից «ազգային» ձրիակերները աճապարում են դիմել նրան խոնարհաբար խնդրելով, որ «ազգային» թերթի կամ գրքի «ազգասէր» հրատարակիչը «ազգասիրաբար» մի օրինակ էլ իւրանց ուղարկէ: Որտեղից առաջ եկաւ այս-

իսկ մէջտեղ ինքը օգտւում է իր շահերի համար և հաստատում է ուժեղ գաղթականական քաղաքականութիւն: Մինչև անգամ մի այնպիսի սուր ընդհարման մէջ, ինչպէս է Անգլո-տրանսկապիտան պատերազմը, Գերմանիան կարողացել է իրան երկու կողմի համար էլ բարեկամ ձանաչել տալ: Մի քանի տարի սրանից առաջ Վիլհելմ կայսրը շնորհաւորեց Տրանսկապիտան հանրապետութեան նախագահ Կրիսթերլին այն յաղթութեան պատճառով, որ Տրանսկապիտանը ունեցաւ Ջեմսոնի արշաւանքի առիթով, իսկ այժմ, երբ նոյն Տրանսկապիտանը գտնվում է կորստի անդունդի առաջ, Գերմանիան իւրան չէզոք է հրատարակում և միայն մամուլի միջոցով պատժական համակրութիւններ է ուղարկում նրան:

Իր խորամանկ քաղաքականութեան շնորհիւ Գերմանիան արձակ համարձակ կարողանում է առաջ տանել իր շահերը, տարածել աշխարհի վրա իր առևտուրը և արդիւնաբերութեան ապրանքները, հաստատել գաղթականութիւններ գերմանական աճող տարրի համար և յետ մղել ուրիշ ազգերին մրցութեան ասպարէզից:

Այժմ որ մի հակակրական և թշնամական զգացմունք էր զգայ դէպի գերմանական տարրի շարժումը և տարածումը, որովհետև այդ տարրը մի կուլտուրական, քաղաքակրթող տարր է: Սակայն ոչ ոք չէ կարող հաշտվել մի քաղաքականութեան հետ, որ միայն գերմանական շահերն ունի աչքի առաջ, որ գերմանական տարրի աջողութեան համար պատրաստ է զոհել ամեն մի ուրիշ կուլտուրական տարր և չէ տողորմած լայն մարդասիրական և միջազգային համերաշխութեան գաղափարներով: Վերջին տարիների դէպքերը ցոյց տուին, որ կրիտիկական վարկերաններում Գերմանիան անցնում է ոյժի կողմը և որ թող ու փողը ազգերը մեծ սխալ գործած կը լինեն, եթէ որ և է յոյս կը դնեն Գերմանիայի խոտուտների և պաշտ-

տեսակ մի ձրիակերութիւն, որի նմանը ուրիշ ազգերի մէջ դուր չգտնար թէ գտնէր: Անկախից դրա միակ պատճառը պէտք է որոնել մեր խմբագիրների եւ հրատարակիչների այն միանգամայն վնասակար սովորութեան մէջ, որ նրանք, կամեցելով ազգին ծառայութիւն մատուցանել, միջոց տուին ամեն մէկին ձրիապէս օգտվել իրանց հրատարակութիւններից:

Եւ եղաւ այն, ինչ որ պէտք է լինէր. ներսնց մատուցած ծառայութիւնը միայն արջի ծառայութիւն էր, որը այժմ տալիս է իր պետութեանը: Այժմ հայերէն հրատարակութիւնները, նոյն իսկ արժէքաւոր եւ գնահատելի հրատարակութիւնները, մեր մէջ այն գինը չունեն հասարակութեան աչքում, որին նրանք իսկապէս արժանի էին: Մեր խմբագիրները այնքան ձրի տարածեցին իրանց թերթերը, մեր գրողները այնքան ձրի բաժանեցին իրանց գրքերը, մենք այնքան «խաթիր» համար բաժանումը գովեցինք եւ գրել տուինք ուրիշներին, այնքան «խաթիր» համար գիրք ծախեցինք եւ գիրք գնեցինք, որ այժմ կամայ աւելանալով մեր հրատարակութիւնների գինը ընկաւ մեր աչքում: Բնութեան օրէնքի դէմ է իւրեքի գնալ իսկ այդ օրէնքը ստու է թէ այն ինչ որ հեղուկութեամբ կարելի է ձեռք բերել, նաեւ մարդու աչքում մի առանձին նշանակութիւն չէ կարող ունենալ: Հէնց այն հանգամանքը, որ մի իր կարելի է առանց աշխատանք գործ դնելու ձեռք բերել, հէնց այդ հանգամանքը նսեմացնում է նրա նշանակութիւնը, վայր է գցում նրա գինը: Այն, մի քան, որ ձրի է, նա ինչ սխալ լինի, այսպէս է դատում ամբողջը.—ինչ կարող էք անել դրա դէմ: Հազար ասացէք, թէ դուք նրա բարին ցանկանալով էք այդպէս անում. ձեր ասածները նրա վրա ոչ մի ազդեցութիւն ունենալ չեն կարող:

պանութեան վրա: Միայն սեփական շահերը աչքի առաջ ունենալով, Գերմանիան անկարող կը լինի գրաւել ազգերի հաւատը դէպի ինքը և շատ շուտով կը պարզվի բարեկամ ձեւանալու և բարեկամ լինելու տարբերութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մեղադր եղեալքէթ», վէպիկ, Սմբատ Մ. Գարագաշի, հրատ. Գարգիէլ հոգրատարանի, Մոսկվա, 1900 թ., 95 էրես, գինը 30 կ.

Վաղուց ապացուցված էր, որ տգէտ եւ անգրագէտ գրչակները աւելի հեշտ են հրատարակել գտնում մեղքում, քան լուրջ հեղինակները: Մի նոր ապացոյց այդ հին ճշմարտութեան—պ. Սմբատ Գարագաշի վէպիկը, որ կարգալիս մարդ գգում է իրան նաւում՝ ալեկոծութեան ժամանակ...

Դժուար է հասկանալ, թէ ինչպէս մի մարդ, որ այնքան անգրագէտ է, որ գրում է ամբողջ պարբերութիւններ՝ բաղկացած միմիայն երկրորդական նախադասութիւններից առանց գլխաւոր նախադասութեան (օր. 18 էրես, «Սաւակայն, հակառակ վերջինին, երբ լսել էր լինում...» եւ այլն), եւ այնքան տգէտ, որ կարծում է, թէ Բագուաւ «վէպիկ» օր» լինելիս «արեգակը իր ոսկեփայլ ճառագայթները սրբութեամբ է տիեզերքի վրայ» (եր. 44), իսկ երբ Բագուաւ գիրք է, «տիեզերքը սեւ է հագնում» (եր. 58),—գիտար է, ասում ենք, հասկանալ, թէ ինչպէս այդ աստիճան մի տգէտ ու անգրագէտ մարդ յաւանում է վէպիկներ գրել եւ ձգտել առաջնորդելու հասարակաց կարծիքը (պարտնի վէպիկը տէնդէնցի օգ է, ուղղված «ազգամայնների» դէմ), եւ աւելի քան դժուար է հասկանալ, թէ ինչու պ. Գարգիէլ Բաղդասարեան փող է ծախսում տպելու այդպիսի մի անհամ վէպիկ, որ վիճակված է միջերկին կերակրելու, մինչդեռ նոյն փողով մեծապատիւ պարոնը կարող էր ուսուցիչ վարձել, որպէս զի նա գտնէ տարրական տեղեկու-

Մեր հրատարակական գործը հէնց սկզբից խախտում է իմքերի վրա դնվելով, մինչև հիմա էլ կաղելով է առաջ գնում: Կաղելով է առաջ գնում, որովհետև մինչև հիմա էլ շարունակվում է նոյն արհեստական եւ վնասակար միջոցները գործադրելը: Որպէս զի գործը հաստատ է ուղիղ ընթացք ստանալ, անհրաժեշտ է միանգամ ընդմիջող թողնել թէ ազգասիրաբար եւ թէ խաթիր միջոցով գործ տեսնելը: «Ազգասիրութիւնը», «խաթիր» եւ ուրիշ նման միջոցները գտնէ մի ժամանակ, գործի սկզբում, անհրաժեշտ են եղել, սակայն այժմ ասանքի համար էլ պարզ է, որ նրանք ներկայ պայմաններում գործին միայն վնասել կարող են, գործը միայն դէպի անկումը կարող են տանել: Փաթաթելով հասարակութեան վրին ձրիաբար, թէ խաթիր միջոցով զանազան պիտանի թէ անպիտան հրատարակութիւններ, գրանով վայր են ընկնում հասարակութեան աչքում ոչ միայն զօռով փաթաթած հրատարակութիւնների վարին ու նշանակութիւնը, այլ և ամեն մի հրատարակութեան, որը դժբաղդութիւն է ունենում հայերէն լեզուով գրված լինելու:

Կամենում էք ընթերցանութիւն տարածել հասարակութեան մէջ: Այդ դէպքում փոխանակ գիտելու մէկին է ասելու. «պարոն Կիրակոսեան, խնդրեմ խաթիր մի կտորի, այս գիրքը առ»,—փոխանակ այսպէս ասելու, համոզեցէք պարոն Կիրակոսեանին, որ այդ գիրքը արժէ կարգաւ եւ որ նա լաւ կանէ, եթէ նա ձեռք բերէ եւ կարգաւ: Որովհետեւ, երբ նա խաթիր համար է աւանդ գիրքը ձեռքանից, նա երեւի չէ էլ կարգաւ այդ գիրքը, իսկ եթէ կարգաւ էլ, գիրքը նրա վրա այն ազդեցութիւն չի գործի, որինքն եւ նա այն օգուտը չի ստանալ նրանից, ինչ օգուտ կարող էր ստանալ, եթէ պահանջ գրար կարգաւ եւ

թիւններ տար պ. Գարագաշին տիեզերագրութեան եւ քերականութեան մասին:

II

«Ոսկեհէր տղան ու իմաստուն աղջիկը», Գարգիէլ Ջաւախկանի, 58 էրես, գինը 15 կ.

Որտեղից է վերցրել պ. Ջաւախկան իր հէքիաթի նիւթը—այստի չէ: Միանկարացած վաճառականի կրտսեր աղջիկ Արեւհատը բաղդի բերմունքով դառնում է թագուհի: Գործը ամենագարշելի մեքենայութիւններով աջողեցնում են գցել Արեւհատին թագաւորի աչքից: Թագաւորը պատժում է նրան եւ ինքը ամուսնանում նրա քոյրերից մեծի հետ: Արեւհատը, քանակից տարի մնում է կայր կարասի մէջ, եւ ամեն անցնող, թագաւորի հրամանով, թրջում է նրա երեսին: Ի վերջոյ մի իմաստուն օրիորդ, Ամպեր անունով, բաց է անում նախանձող քոյրերի մեքենայութիւնները եւ ապացուցանում է Արեւհատի անմեղութիւնը:

Հետաքրքիր է այդ իմաստուն օրիորդի դատաստանը, որի մէջն է կայանում հէքիաթի բարոյականը:

«Ուրեմն, թագաւոր, դուք ինչու պէտք է դատաւարտեք Արեւհատի մեծ քոյրը, ձեր այժմեայ ամուսնուն. քանի որ ամուսնութեան կարգը նրան էր պատկանում, նա անկասկած պէտք է նախանձից զրդուած քրոջ հետ այնպէս վարուէր. կարծեմ, դուք նրանից պակաս չէիք վարուել, երբ ձեր փոխարէն արքայական գահը ժառանգէր ձեր փոքրիկ եղբայրը:—Թագաւորը ոչինչ չը գտաւ պատասխանելու, իսկ ժողովուրդը զարմայել էր հրաշալի օրիորդի դատաստանից» (եր. 52):

Ինչպէս տեսնում էք, հէքիաթը գրված է մեզ հիացնելու համար այդպիսի սքանչելի «պարսկական» դատաստանից: Իրաւունք չունենք արդեօք ասելու. «Ազատի մեղ, Աւատուած, այդպիսի դատաստանից...» եւ այդպիսի հեղինակներից, մանաւանդ որ պ. Ջաւախկանի գրքերը լի է այնպիսի անգրագէտ դարձուածներով ու պարբերութիւններով, ինչպէս «զբաղեցուցիչ պարագմունքներ», «յայտնում է թագաւորին օրիորդների գալըստեան համար» (մասին), «նրա հետ համեմատ

այնուհետեւ կարգաւ Աշխատեցէք, որ հասարակութիւնը գայ այն եղրակացութեան, գայ այն համոզմանը, թէ գիրք կարդալը լաւ բան է, օգտակար է, որ արժէ գրքի համար թէ փող մխել եւ թէ ժամանակ գործադրել, աշխատեցէք այդ ուղղութեամբ մինչև այն աստիճան, որ հասարակութիւնը ինքը իր ուղղված գնալ գրավաճառանց, առնէ գիրքը եւ կարգաւ: Մի խօսքով անհրաժեշտ է, որ հասարակութեան մէջ ամենից առաջ ընթերցանութեամբ զբաղվելու պահանջ առաջանայ եւ այնուհետեւ նա առանց ձեր առաջարկելու եւ ինչորեւէ էլ գիրքը եւ կարծեմ եւ կը կարգաւ:

Իսկ որպէս զի այդ պահանջը առաջանայ, որպէս զի գիրքը հասարակութեան աչքում այն նշանակութիւնը ունենայ, որին նա իսկապէս արժանի է, դրա համար անհրաժեշտ պայմաններից մէկն էլ այն է, որ այսուհետեւ այլ եւս չը գործադրվին այն բոլոր արհեստական միջոցները, որոնք գործադրվել են մինչև հիմա եւ որոնք գործին միայն խանգարել են եւ վնասել: Որպիսի մեծ հարուած է հասցնում գործին մանաւանդ այսպէս ասած խաթիր միջոցով կամ զօռով գիրք տարածելը: Ինչպէս յայտնի է, բոլոր լուսաւոր երկիրներում հասարակութիւնը առնում է եւ կարգում է միայն այն գրքերը, որոնց նա սիրում է եւ կամենում է կարգաւ: Այդպէս չէ միայն մեզ մօտ: Մեզանում փոխանակ թողնելու, որ մարդիկ գնեն ու կարդան իրանց սիրած գրքերը, մեր գիրքը լոյս ընծայողները իրանք են վազում ընթերցողների ետեւից եւ նրանց վրին փաթաթում իրանց հրատարակութիւնները: Եւ ինչ է դուրս գալիս դրանից: Շնորհիւ այդ հանգամանքի շատ անգամ պատահում է, որ մի բոլորովին անպէտք հրատարակութիւն տարածվում է մեծ քանակութեամբ եւ ամբողջովին սպառվում է, մինչդեռ ա-

(համաձայն) էին մնացած քայլերը», «քոյր երբ զգալով, որ երեխայի ծննդեան օրերը (?) մօտեցել են, նոքա (այսինքն քայլերը) վճռում են...», «թագաւորը զգալով իր թշուառ կնոջ վիշտը, նա (այսինքն թագաւորը) նոյնպէս տատանուեց եւ ընկաւ»։ «Երեխորցը» եւ այն, բայց աւելի լաւ է բերել մի ամբողջ հատուած, պահպանելով հեղինակի կէտադրութիւնը։

«Թագուհին լսեց դաժնի կծու հեղուկութիւնը, տատանուեց, քայլերը առաջ տարաւ, այդ հրաշալի գիշերին գլխաւոր, վիզը ծռած, մազերը քամուց ծածանում, ժողովրդի վրա ազդեց, ժողովուրդը գլուխը խոնարհեց եւ բոլորեքեան ծնկաչօք գետին ընկան, իսկ երբ վեր կացին իրանց թագուհուն տեսին կարի կարատում եւ միմիայն գլուխն պարզ օդում, ողբալով ցրուեցին, հանդէսը վերջացաւ, ամէնքը քայտուեցին իրենց տները» (եր. 30)։

Աւելցրէ՛ք դրա վրա եւ այն, որ գրքովը տպւած է անթիւ վրիպակներով եւ կէտադրութեան սխալներով։

Ինչպէս չը բացականչել «Ողբամ զեղ»... հայոց գրականութիւն։

S. Թ.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

Ապրիլի 7-ին

Նախկին գիւղում արանից մի քանի օր առաջ գիշերը մանում են Ս. Ղ.՝ իր այգին, կոտորում են այգում եղած բոլոր պատուաւար արած պտղատու 60—70 հատ ծառեր, որոնք նոր էին բաց արել իրանց կոկոնները։ Երեւակայեցէ՛ք, ընթերցող, թէ ինչ կը լինի գիւղացին, որն առաւօտեան կանուխ վեր է կենում տեղից, գնում է այգին, որ տեսնէ ինչպէս է ծաղկել Մայրաչա կոչված պատուաւարը (Մայրաչա կոչվածը տանձի ամենալաւ տեսակն է թէ իր մեծութեամբ եւ թէ իր համով) եւ յանկարծ տեսնում է, որ իր ձեռքով տնկած, 8—9 տարի պահած—պահպանված պատուաւար եղած ծառերը մտելի նման գետնի վրա փլած, կտորկտոր են եղած։ Գիւղացու աչքերը սեւանում են, տեսնելով այդ անգուլթ կերպով կտատրվածը, եւ նա ընկնում է յուսահատութեան մէջ։ Մտածում է. էլ ինչով ապրէ ինքը, էլ ինչ միջոց գտնէ իր տունը պահելու համար։ Ս. Ղ.՝ չոր գործը յանձնել է քննութեան, բայց դեռ չարագործները յայտնի չեն առ այժմ։

Այս գէպից 15—20 օր յետոյ պատահեց մի եւ նոյն գիւղում հետեւեալը. կոտորեցին վեց հոգու այգում եղած պտղատու ծառերը եւ խաղողի վազերը. չարագործները դեռ եւս յայտնի չեն, բայց կասկած չը կայ, որ գիւղացիները գիտեն, թէ չարագործները ովքեր են եւ չեն յայտնում կտաւարութեանը։ Ի՞նչպէս

ւերի գնահատելի հրատարակութիւնները դատաւարութեամբ են մնում փոխու գրաւման հոգնեցում։ Յամենայն գէպս, այդ միջոցով գիրք տարածելը միանգամայն դատաւարութիւն պէտք է համարեն—լինի այդ գիրքը պիտանի թէ՛ անպէտք, այդ մի եւ նոյնն է։ Վերջապէս մինչեւ երբ պէտք է հասարակութիւնը կերակրվի եւ առաջնորդի ծնկեր երեխայի նման։ Թողէ՛ք, որ նա առաջ գնայ ինքնուրոյն կերպով, իր սեփական կամքով։ Թողէ՛ք որ գրքի պահանջը նրա մէջ զարգանայ ինքնաբերաբար, բնական ընթացքով, առանց արհեստական միջոցների գործ դնելու։

Վերջին տարիներս գիրքը սկսել է մուտք գործել եւ մեր գիւղերը Սակայն, դժբաղդաբար, պէտք է ասել, որ այստեղ եւս գործը ընկնում է նոյն խախտում հիմքի վրա—գրքերը տարածվում են մեծ մասամբ ձրի։ Փորձը արդէն ցոյց է տուել, թէ ինչ տխուր հետեւանքներ է առաջանում այդ միջոցը։ Փորձը ցոյց է տալիս, որ գիրքը ձրի տարածվելով գիւղացիների մէջ, գրքի վարձն ու նշանակութիւնը ընկնում է նրանց աչքում։ Դա մի ակսիոսա է, որի մասին վիճել անկարելի է։ Բացի դրանից, ձրի տարածելը գիւղացիների մէջ նոյն իսկ կասկած է յարուցանում թէ գէպի գիրքը եւ թէ գէպի տարածողները։ «Երեւի այդ գրքերը մեզ համար մի վնասակար բան կայ, որ մեզ ձրի են բաժանում»։ Չէ որ այսպէս է դատում մեր գիւղացին։ Բայց կասկածով վերաբերվին էլ մի կողմ թողած, հէնց ձրի օգտվելն ինքն ըստ ընթան ահագին խոչընդոտ է հանդիսանում գործի ամուր եւ հաստատ հիմք ստանալուն։ Եթէ մեր գիւղացիները մի անգամ սովորեցին գիրքը ձրի ձեռք բերել, չէ որ այնուհետեւ նրանք այլ եւս չեն կամենայ վճարելու Լաւ իմանալով, որ գիրքը կարելի է ձրի ձեռք բերել, սովորութիւն դարձնելով ձրի

յայտնին, չէ որ յայտնողի այգին նոյն օրին կը հասցեն։ Այդ բանը իմանալով, հասարակութեան տանուտէրը կանչում է Նախկինի գիւղացիներին 50 հոգի, մեծամեծներին ատորա գրութիւն է անում եւ ասում է, որ եթէ միւս անգամ էլ պատահէ այգիսի դէպք, պէտք է ստորագրող անձինք դռնին չարագործներին եւ տան կտաւարութեան ձեռքը, հակառակ դէպքում իրանք են պատասխանատու։ Բայց աւելի լաւ կը լինէր, եթէ չուտ ձեռք առնվէին միջոցներ չարագործներին գրութիւն եւ պատժելու համար, որովհետեւ այդ տեսակ ամբողջ դէպքը յաճախ են կրկնվում Սուրմալուի գաւառում։ Հիմա Սուրմալուի գիւղացիների ձեռքում մի տեսակ գէնք է դարձել հարեւանի մէջ թիւս խօսքի համար վերջինիցի լինել՝ այգին կոտորելով կամ հացահատիկի եւ խոտի դէգերը այրելով։

Պէտք է կտաւարութիւնը մեծ ուշադրութիւն դարձնի այս ստոր գործերի վրա, գտնելով չարագործներին եւ անխնայ պատժելով նրանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կերակի, ապրիլի 16-ին, երեկոյեան ժամը 7-ին քաղաքային Դումայի դահլիճում կայացաւ Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, որին ներկայ էր եւ Թիֆլիսի պ. նահանգապետի ներկայացուցիչը։ Ժողովի նախագահ ընտրվեց գաղտնի քուէարկութեամբ բժշկապետ Բ. Նաւասարդեան։ Ժողովը հաստատեց վարչութեան ներկայացրած հայիւր եւ վարչութեան առաջարկութիւնը գրադարան—ընթերցարանի մասին։ Այդ առաջարկութեան համաձայն որոշվեց նախկին գրադարան—ընթերցարանի հիմնական մասի գրքերը առ այժմ պահել, իսկ շարժական մասի գրքերը նուիրել Ներսիսեան դպրոցին եւ Թիֆլիսի էփանագին գրադարանին։ Ժողովը ընդունեց նաեւ աշխատութեան տուն բանալու առաջարկը, իսկ Յովհ. Խուրադեանի անունով որբերի պաշտպանարան բանալու հարցի ընթացքին յետաձգվեց, ընտրվելով մի մասնաժողով այդ հարցի մանրամասն մշակման համար։ Ժողովի շարունակութիւնը լինելու է առաջիկայ կերակի, ամսիս 23-ին։

Ստացանք «Համառոտ հաշիւ սուրբ Նշան եկեղեցւոյ (Թիֆլիսի) վառն 1888—1899 թ.»։ Երեք հաշուետուների մի մանրամասն բացատրութիւնը, որ կցած է այդ հաշիւին, մի պատմութիւն է թէ ինչպէս են կողոպտւում մեր եկեղեցիները անբարեխիղճ երէցիկների ձեռքով։ Հին երէցիկների ժամանակ կնուքից, պսակից ու ննջեցեալից ս. Նշան եկեղեցին ստացել է մի տարվայ ընթացքում միայն 3

օգտվելը, միանգամայն հասկանալի է, որ այնուհետեւ նրանք գրքին տուած փողը կորած պիտի համարեն—մի վերաբերմունք դէպի գիրքը, որի մէջ մեղադրում են ներկայումս մեր ընթերցող հասարակութեանը։

Չը կայ մի այնպիսի պատճառ, որով կարելի լինէր ապացուցանել ձրի տարածելու անհրաժեշտութիւնը։ Ոչ գիւղացու աղքատութիւնը, ոչ նրա տգիտութիւնը պատճառ չեն կարող լինել։ Ճիշտ է, թէ եւ մեր գիւղացին աղքատ է, բայց նա այնքան միջոց ունի, որ կարողաւ նուր է արժանի գօտի եւ այլ նման զարգիւր գործածել։ Ուրեմն այն աւելորդ փողը, որ նա այժմ ծախում է այդ տեսակ ոչ անհրաժեշտ առարկաների վրա, այդ փողը նա կարող է յատկացնել գրքին, եթէ միայն գիրքը նրա համար առաջնակարգ պահանջ դառնայ։ Այժմ այդ պահանջը թէ եւ այնքան մի խնայ չէ նրա մէջ, թէ եւ նա այդ կողմից դեռ շատ է աղէտ, բայց, այնու ամենայնիւ, կայ սէր դէպի գիրքը նրա մէջ շատ թէ քիչ, բայց պահանջ կայ եւ նա այնքան էլ ժպտ եւ խնայող չէ գրքի վերաբերմամբ։ Պէտք է աշխատել, որ այդ սէրը, այդ պահանջը աստիճանաբար զարգանայ նրա մէջ, զարգանայ այնքան, որ նա փոխանակ զարգարաններին վրա ծախելու իր փողը, ծախսէ գրքի վրա։ Եւ դրա համար դարձաւ կարիք չը կայ չտալի եւ արհեստական միջոցների դիմել։ Հարկաւոր է ձեռք առնել աւելի խելացի եւ նպատակայարար միջոցներ։ Այդ տեսակ միջոցներից մէկի մասին շատ են խոսում եւ շատ յիշեցնում մեր ժամանակում, բայց, դժբաղդաբար, շատ քիչ են ուշադրութիւն դարձնում նրա վրա։

Միշտ կրկնվում է մի եւ նոյն խօսքը, թէ գիրքը ժողովրդականացնելու համար անհրաժեշտ է գինը էփան նշանակել։ Բայց շատերն են իրագործում այդ։ Այն ժամանակ երբ Գեր-

բուրի 20 կօպէկ, այն ինչ այժմեան երկրորդ ժամանակ տոացվում է 400 րուբլուց աւելի ինչ աւել կողի, որ կողոպտված եկեղեցին աւերակ պիտի լինի. ս. Նշանի աւերակները, ինչպէս վկայում են հաշուետուները, վերանորոգել է այժմեան երէցիկի Ծաղիկեանը, այնպէս որ «այժմ սուրբ Նշան եկեղեցին մանկալիս զգում եւ, որ մոռնում եւ քրիստոնէի ձեռքով խնամվող Աստուծու տաճարը»։ Այդ էլ մեծ բան է մեր ժամանակներում, երբ եկեղեցական գործերը աւերակների մի կոյտ են ներկայացնում եւ այդ կոյտի վրա աստուածաբաններն ողբերն ու հառաչանքներն են միայն լսվում։

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում քննեց Բօբիի ներկայացրած դաշնագիրը ս. Դաւիթի լեռան վրա եկեղեցի ուղի չի ներու համար։ Դուման, մոյնելով մի քանի փոփոխութիւններ, ընդունեց դաշնագիրը։

Թիֆլիսի քաղաքային դուման, աչքի առաջ ունենալով ուղարկւած անգամ Ե. Խոսրոյանի քայքայված առողջութիւնը, որոնց միանուագ նշանակել 500 րուբլի եւ առաջ արձակուրդ առողջանալու համար։

«Тиф. Листок»-ը լսել է, թէ այն ակցիօնեական ընկերութիւնը, որ արտօնութիւն է ստացել Թիֆլիսից Թեյա երկաթուղի չինյուր, լատ օրերումս սկսում է չինութեան աշխատանքները։

Ստացանք Գ. Դաւիթի Էլէկօվի «О во-доохранномъ значеніи лѣсовъ Кубинскаго уѣзда бакинскій губерніи» բրօշուրը, որը կարգաւորվել է իրբեւ զեկուցում Պետերբուրգի անաստային ընկերութեան մէջ։ Բրօշուրը բաղկացած է մեծապիս 50 երեսներից եւ արտատպւած է «Лѣсной Журналъ» ամսագրից, որտեղ նա նախապէս տպւած էր։

Մօսկվայում կազմվել էր մի ընկերութիւն, որի նպատակն էր կանանց համար բժշկական ինստիտուտ հիմնել։ Աւագ-շարքի վերջին օրերում, ինչպէս հաղորդում են Մօսկվայի լրագիրները, ընկերութիւնը ստացաւ Պետերբուրգից իր հաստատված կանոնադրութիւնը։ Ընկերութիւնը պէտք է հիմնէ եւ պահէ ինստիտուտը մասնաւոր նուիրատուութիւններով։

Հետեւեալ տարի ուսաց մեղուապահական ընկերութիւնը, իր հիմնարկութեան տասնամակի առթիւ, մտադիր է մեղուապահների համառուական ժողով հրաւիրել Պետերբուրգում։

Մանիայի նման մի լուսաւոր երկրում, ուր գիրքը արդէն պահանջ է դարձել։ Եթէ լինի «Վիկտոր Թեյ» արժէ միայն 6—7 կօպէկ, այդ նոյն գրքի թարգմանութիւնը մեղանում արժէ 50 կօպէկ։ Անկասկած այդ գիրքը նոյն այդ լուսաւոր Գերմանիայի հասարակ ժողովրդի մէջ երբեք չէր տարածվի, եթէ նա այնտեղ արժեւար նոյնքան, որքան մեզ մօտ։ Ինչ կայ ուրեմն զարմանալի, որ այդքան թանկ գրքերը մեր ժողովրդի մէջ չեն տարածվում, մի ժողովուրդ, որ դեռ նոր է գրքի համար առնում։ Բայց եթէ մեր գիւղացիները անկարող են այդպիսի գումարներ յատկացնել գրքին, գրանից չը պէտք է այն սխալ եղբայրացութիւնը անել, թէ գրքերը հարկաւոր է ձրի բաժանել նրանց։ Չէ որ գերմանացիները գիրքը ձրի չը բաժանեցին, բայց եւ այնպէս նա ժողովրդականացաւ։ Ժողովրդականացաւ, որովհետեւ գինը նշանակեցին էփան եւ գիրքը տարածվեց։ Այդ է անա ամենախելացի եւ ամենապարզ միջոցը գիրքը ժողովրդականացնելու համար։—մի միջոց, որը վաղուց է գործադրվում թէ Ռուսաստանում եւ թէ Արեւմտեան Եւրօպայում եւ որը դեռ չէ գործադրվում միայն մեր մէջ։

Ի վերջոյ չէ կարելի մատնացոյց չանել նոյն աղգաբարկան հոգի վրա բուսած եւ չափազանց տարածված մի վնասակար սովորութեան վրա եւս, որը թէ եւ վայր չէ գցում գրքի դիմը հասարակութեան աչքում, բայց սոստիկ վնասում է հրատարակչական գործի եւ գրականութեան բարգաւաճմանը։ Մեր թերթերում յաճախ կարելի է պատահել այս տեսակ յայտարարութեան։ «Այս ինչ տեղում հիմնվել է գրադարան, ինչպէս եւս խնդրներն, հեղինակներին, հրատարակիչներին նուիրել ինչեւզ գրադարանին։ Որ հայերը դեռ կու-

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են ապրիլի 17-ից. «Այսօր երկաթուղային կայարանում ստացվեց Թիֆլիսից ուղարկված մի արկղ, որը, համաձայն բեռնադրի, պիտի լինէր պանիր. բայց կշռելու ժամանակ, ժանդարմը նկատում է, որ ինչ-որ հիւթ է հոսում եւ վատ հոտ է գալիս, իսկոյն բաց է անել տալիս արկղը, եւ չըջապատողները զարմանում են տեսնելով մարդու անգուլթի դիակ, որը չորս կողմից աղով ծածկված էր, եւ ոտքերը ծաղկած էին դէպի կուրծքը, որպէս զի հնչտ լինէր յարմարեցնելու արկղի մէջ եւ կառավարից խուսափելու։ Բեռնադրին նայելով, տեսան որ ստորագրված է «Բեյթաւաւալի» եւ ուղարկվում է Մօսկվա։ Այսօր Բաթումը դրդում է այդ անսովոր դէպքից»։

ՊԵՏԻՑԻՑԻՑԻՑԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի հայ հասարակութիւնը, Եփեսոս քաշաւի եւ պ. Սկեզնիկեանի ջանքով, Զատիկ շաբաթ երեկոյեան, տեղիս ուսումնարանի շէնքում թաթախման հաց էր պատրաստել այստեղ ծառայող հայ զինուորների համար։ Ցանկալի էր, որ ամեն տեղ այսպիսի տօն օրերում հայ հասարակութիւնը ուրախացնէր հայ զինուորներին»։

ԳՍՐՎԱՆՍՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Մի կին ծնեց մի արու, բուրբուրկն առողջ դաւակ, միայն առանց արտաթորութեան խողովակի (անյգի)»—եւ չորս օրից յետոյ վախճանվեց, նոյն իսկ ծիծ չառաւ։ Սա մի չը լսված հրաշք էր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴՎԷՑՑԱՐԻՍՅԻՑ

Ժննդի, ապրիլի 17-ին

Համարեա ոչնչով միմեանց նման չեն այն Զատիկը, որ երկու օր առաջ տօնեց Ժննդի, եւ այն Զատիկը՝ որ արդէն տօնվեց ձեզ մօտ։ Կրօնական այդ մեծ տօնը, որ այսօրեան դարերից ի վեր քրիստոնէայ աշխարհի ոգեւորութեան գլխաւոր աղբիւրն է եղել, անցնում է այստեղ շատ անպաճոճ, պարզ, սառն։ Ակամայ յիշում եմ զատկական տօնը հայոց եկեղեցիներում, եւ եկեղեցիներից դուրս՝ ընտանիքներում, հասարակութեան մէջ։ Տօնական զգեստներ, կեր ու խում, խուհիւր բուրմունք, առատ մոմալաւութիւն։ Եւ ոչ միւր այստեղ Խուհիւր բուրմունքի տեղ՝ հասարակութիւնը քաղաքից դուրս վայելում է գարնան նորաբողոք ծաղիկների կենդանաբար բուրմունքը, իսկ մոմերի բոցի տեղ՝ տիրում է խօսքի բոցը, անթիւ ժողովներում կրօնական այս տօնը այլ եւս չէ զբաղեցնում հասարակութիւնը. եւ այն ոգեւորված կենդանու-

տուբական այն աստիճանին չեն հասել, որ գրադարանները նրանց համար պահանջ լինէին եւ պահվէին սեփական եկամուտներով, որ գրադարանները մեղանում զեռ եւս բարեգործական հաստատութիւնների շարքում են գտնվում—այդ պարզ է։ Բայց անհասկանալի է, թէ ինչու այդ բարեգործական հաստատութիւնները պէտք է ամբողջովին պահվեն խեղճ ու կրակ հայ հեղինակների հաշուով։ Միմիայն գիրք հրատարակել արդէն մի ամե՛ զոհաբերութիւն է անսպասելով եւ աղքատ հայ հեղինակի կողմից։ Ինչու էք պահանջում, որ նա պահանջէ եւ մեր բարեգործական հաստատութիւնները, եթէ մեր գրադարանները, մեր ուսումնարանները, մեր ուսանողութիւնը բոլոր հրատարակութիւնները ձրի տանան, ապա ո՞վ պէտք է վճար նրանց համար։ Չէ որ մեր ընթերցող հասարակութիւնն էլ կազմում են գրադարանների յաճախորդները, ուսուցիչները, ուսանողները եւ այլն։ Մեր գրադարանները, ուսանողական ժողովները եւ այլ հաստատութիւնները լաւ կանխին, եթէ ձեռք վերցնէին այդ տեղը եւ միանգամայն վնասակար սովորութիւնից եւ փոխանակ ծառաբերեւելով ուսանց այն էլ խեղճութեան մէջ գտնվող հայ հեղինակի վրա, աշխատէին ուրիշ աղբիւրներից հայթայթել միջոցներ եւ այդպիսով ձեռք բերէին հայրենի հրատարակութիւնները։

Այդպէս է պահանջում արդարութիւնը՝ աչքի առաջ ունենալով ոչ միայն հայ հեղինակի վիճակը, այլ եւ մեր հրատարակչական գործի ուրեմն եւ գրականութեան բարգաւաճումը, որովհետեւ մի գրականութեան բարգաւաճման գլխաւոր պայմաններից մէկն էլ նրա աշխատանքների նւթական ապահովութիւնն է։

Ա. Սմիլեան

Կիւն վ.

նան և Ուէլսի իշխանուհին ապրիլի 14-ին, առաւօտեան, արտակարգ դնաքով ճանապարհ ընկած Նէյ-Միչեստէր, որտեղից թաղուհին կուղևորվի Ռուսաստան, իսկ Ուէլսի իշխանուհին—Անգլիա:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Պետական քարտուղար Գեյ բօթրական հանրապետութիւնների միասիրտին այնպէս կը վերաբերվի, ինչպէս աչքի ընկնող գրութիւն ունեցող մի որ եւ է անձի, որը այցելում է Միացեալ Նահանգները եւ նրան այնպէս կընդունի, ինչպէս Մօնտէգլի Ուայտին, բայց նրան իրաւունք չի տայ որ եւ է բանակցութիւն սկսել արտաքին գործերի միջնորդութեան հետ:

ԱՄՍՏԵՐԴԱՄ. Բօթրական հանրապետութիւնների պատգամաւորութիւնը այսօր այցելելով Ամստերդամ եւ ընդունվելով այստեղի արանավարական յանձնաժողովի կողմից: Ճանապարհին ժողովրդի ամբողջ սիրով ողջունեց եւ կողներին: Նրանց մատուցվելով ծաղիկներ եւ պատկերներ: Բուրգոմիստրը ընդունեց պատգամաւորութիւնը, երկուցեան, պատգամաւորութեան կազմում ընդունվելով ներկայ էին ազգաբնակչութեան բոլոր դասակարգերին պատկանող բազմաթիւ անձինք, որոնց թոււով բուրգոմիստրը, քաղաքացիական իշխանութիւնները եւ մի քանի կորպորացիաներ: Պատգամաւորութեան անդամները ճանաչարտասանեցին: Վաղը երկուցեան կը կայանայ մի համագումար ժողով, որ պատգամաւորութեանը կը յայտնվի համալսութիւն: Ժողովին ներկայ կը լինեն իրանք՝ պատգամաւորութեան անդամները:

ՊՐԵՏՈՐԻԱ: Իօհաննէսըրզում տեղի ունեցած պաթիւնի առթիւ, կառավարութիւնը այսօր մի չըջարեալ հրատարակեց, որով հրամանագրում է զեռ եւս հանրապետութեան մէջ մնացած բոլորանական հպատակներին, սակաւ բացառութեամբ, հեռանալ նրա սահմաններէն 48 ժամկէտ ընթացքում:

ՊՐԵՏ-ՍԱԻԻ: Եւրօպական թաղում ժամտախտից հիւանդանալու երկու դէպք կար, որ մահով վերջացաւ. այսօր հաղորդում են եւրօպի գէպի մասին:

ԿԻՄԲԵՐԼԵՅ: Բօթրների 200 մարդուց բաղկացած զորաբաժինը գրաւեց Վինգսորտոն:

ԼԷՅԻ-ՍՄԻԹ: Գնեւրով Բոստօնի քաղաքում Պրետորիայից եւ նորից յանձն առաւ բօթրները ոչմերի հրամանատարութիւնը:

ԽՈՐԱԳԵՐ՝ ԱԼԷԲՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչներ: ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒՆԴԱՆՈՅ

Բ. ՆԱԻՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնջովի արձանի հանդէպ)
ա մ ե ո ռ, բ ա գ ի կ ի ռ ա կ ի օ ռ ե ի ծ յ:

Ա Ռ Ա Ռ Տ Ն Ե Ր Ը

Ա. Ա. ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վերականգնող (սփիւրիտ) և միլիտան. հիւանդ.

Ա. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներարկային:

Զ. Բ. ԲԱՐԱՆԱՍԱՆԵՑ—11—12 ժ. կանանց և երկաթից հիւանդ.

Ա. Ն. ՇԱԿԱՎՈՍԿԻ—12—1 ժ. ականջի, կոկորդի և բերի:

Ա. Պ. ԿԱՐԱՅԵԱՆԵՑ—1—1/2 ժ. ներքին և երկաթից:

Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը

Ա. Ն. ՇԱԿԱՎՈՍԿԻ—6—7 ժ. ներարկային (երեւարարութիւն), վերականգնող և մորթի:

Ա. Ա. ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆ—7 1/2—8 ժ.

Վ. Մ. ՄԱԿԱՎԻԱՆԸ—քիմիական և խոշորացուցական հետազոտութիւն:

Վճար 50 կ. չքաղերը ձրի. համախորդի (կօնսիլիոն) և օտարացիայի համար տառնին:

Փ. Տ. ԱՌԱՎԱՆԻՍԿԻ—տանի, ծաղիկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերանորոգ. 121—150

ԲՈՇԵԿԱԿԵՆ ՆԱԻՍԱՐԴԵԱՆ

Լ Ո Յ Ա Մ Ե Ս Ա Լ

Պատկերազարդ

ԱՋԻԳՐԱԿԱՆ ՀՆՆԴԵՍԻ

Զ. ԳԻՐԵՐ (432 եւ. 15 պատկեր)

Բացված է VII եւ VIII դրերի բաժանորդագրութիւնը: Երկու դրերի բաժանորդագրին է 3 ռուբ. կամ 10 ֆրանկ:

Դիմել: Երվանդ Լալագանց, Թիֆլիս. Семанария Нерсисян. Ervand Lalagantz, Tiflis Séminaire Nersissian.

2—3

ՄԻ ՀԱՅՈՒՅԻ

որ գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուները եւ մուգիլան, ցանկանում է գտնել կօնսիլիոնայի տեղ, կամ պարագիւր եթէ ուր տարեկան աշկիւղ հետ. յօժար է գնալ նաեւ քաղաքից դուրս եւ արտասահման: Հասցէն՝ Лабораторная ул., № 5, домъ Пуринова.

(Գաւթում աշկիւղը): 2—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտնում է, թէ նրա զիւանաւոր մէջ 1900 թվի ապրիլի 22-ին նշանակված է աճուրդ կապալով տալու խճաքարի եւ աւաղի մատակարարումը քաղաքային խնդրած փողոցները կարկատելու համար. 1, 2, 3 քաղաքամասերում—100 խորանարդ սաժէն խճաքար եւ 20 խոր. ս. աւաղ. 4, 5 եւ 6 քաղաքամասերում—50 խոր. ս. խճաքար եւ 10 խոր. ս. աւաղ. 7 եւ 8 քաղաքամասերում—250 խ. ս. խճաքար եւ 50 խ. ս. աւաղ. եւ 9, 10 քաղաքամասերում 200 խ. ս. խճաքար եւ 40 խ. ս. աւաղ: Այդ կապալը կարող է արվել եւ մաս-մաս: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը ժամը 9-ից մինչեւ 3-ը: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՆՆԻՃՈՒՄ

Շ ա բ ա թ, ա պր ի լ ի 22-ին

Գ. Միրզախանյե, հայ թատերասերների բարեհաճ մասնակցութեամբ, կը ներկայացնէ

ՉԱՐԼԵՅԻ ՄՕՐԱՔՈՅՐԸ

Ֆարս 3 գործողութ. հեղ. Բրանդոն Թոմասի, թարգ. Ե. Ամիրխանի:

Մասնակցում են՝ տ.տ. Ն. Դոլուխանյան եւ Իմենթո, օր.օր. Յ. Մէլիք-Հայկազեան եւ Օ. Փրիգոնեան եւ պ.պ. Դ. Աղայեան, Մ. Աթաբէկեան, բժ. Ա. Սաթիսեան, բժ. Ա. Զարգարեան, Ա. Մանգիլեան եւ Գ. Միրզախանյե:

Զ Ա Ի Ե Շ Տ

Մասնակցում են՝ տ. Օ. Մայսուրեանց եւ պ.պ. Մ. Աթաբէկեան, Ն. Նիվինսկի, Ա. Մանգիլեան եւ Գ. Միրզախանյե:

Սկիզբն է երկուցեան ժամը 8-ին:

Տօմասիների գինը 5 ռուբլուց մինչեւ 1 ռ. 10 կ.:

Վաղորդ ատանալ ցանկացողները կարող են գիմել իշխ. Մ. Թումանյանին, Բարեաւորնակայա № 8, կէսօրից 2 մինչեւ 4 ժամը: (2. ե. հ.) 3—3

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«Մ Ի Զ Ն Ո Ր Դ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պատմ. Թամարեայի քարավան-սարայի հանդէպ:

Հրաւիրում է պ.պ. տառերներին հաղորդել մանրամասն հասցէ աղատ բնակարանների (որոնք համար վերցնելով է 20 կօպ.), որ շատ զեւրութիւն կը պատճառէ թէ տանտէներին եւ թէ բնակարան վարձողներին: Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ: Գրասենակում կայ աղատ բնակարանների մեծ ցուցակ: Ճանկացողները թող գիմեն գրասենակ: № 1. 0—24

Լ Ո Յ Ա Մ Ե Ս Ա Լ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ

հարթ կարի համար

Կազմեց օր. Եղ. Պատկանեան

Գինն է 80 ԿՊ.

Գիմել Թիֆլիս, Կոնտոր Ընկերության Իշխանի Բնակարանում (Լորիս-Մելիկովսկայա № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. Ընկերութեան անդամ լինելու համար վճարում են տարեկան 6 ռուբլի եւ տանում 8 ռուբլու գրքեր: Ընկերութեան գրասենակում վաճառվում են ընկերութեան գրքերը: Ճանկացողներին ձրի ուղարկվում է գրացուցակ: 5—5

Ա. պր ի լ ի 12-ից բացվել է

ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Տիկին Մուսեղեանցի

(Дворцовая ул.)

Ընդունվում են ամեն անգամ պատուէրներ—բնական մեծութեամբ նկարների, իւզաների եւ այլն:

Ստացված են ահաղին քանակութեամբ արտասահմանեան օրկարիւղներ, գեկորացիաներ եւ ակեստարներ, որոնք նպատակում են գործի չընդունվեան եւ մաքրութեան եւ բազմաուսակ ձեւերի:

Գները չափաւոր են: Գործարանը ունի մասնաձեւերը Ալեքսանդրօպօլում եւ Կարսում: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, թէ նրա զիւանաւոր մէջ ներկայ 1900 թվի ապրիլի 19-ին, 12 ժամին, նշանակված է աճուրդ կապալով տալու քաղաքային փողոցների սալադրարները, եւ միւսների ուղղելը 1, 2 եւ 3 քաղաքամասերում, ընդամենը 5,000 քառ. սաժ. 4, 5 եւ 6 քաղաքամասերում—2,500 քառ. սաժ. 7 եւ 8 քաղաքամասերում—2,500 քառ. սաժ. եւ 9 եւ 10 քաղաքամասերում—5,000 քառ. սաժ.: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում, բոլոր լի օրերը 9-ից մինչեւ 3 ժ.: 3—3

ԹԻՓԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՑ

Ընդունելութեան քննութիւնները լինելու են ապրիլի 25-ից մինչեւ 28, առաւօտեան 9 ժամից սկսած, զպրոցի շինութեան մէջ: Այն անձինք, որոնք չեն ներկայացրել իրանց ինդիքների հետ հարկաւոր դօկումենտները, պարտաւոր են ներկայացնել նրանց մինչեւ ապրիլի 22-ը:


1—4

Ընդունում եւ չափաւոր գներով

հետեւեալ աշխատանքների կատարումը.

- 1) Երկաթեայ կապերով ամրացնել այն պատերը, որոնք ճեղքուածքներ կամ այլ վնաս են կրել երկաթաբաներից կամ անկանոն նստածքից, նոյնպէս եւ շինութիւն սկսելու ապահովանքները:
- 2) Ուղղել եւ ներկել աների ճակատները առանց սիւներ կանգնեցնելու:
- 3) Ամեն տեսակ կարկատաներ եւ ներկարարական աշխատանքներ կատարել շինութիւնների բարձր մասերում, եկեղեցիների գմբէթների եւ խաչերի ոսկէզօծը, վերին կարնիզները եւ պարապետները կարկատել:

Աշխատանքի կանոնաւորութեան եւ մաքրութեան մասին կարող են երաշխաւոր լինել ինձ ճանաչող շատ ճարտարապետների եւ տեխնիկների բազմաթիւ վկայութիւնները:



ՅԵՄԵՆՏԻ-ՏԵԼԵՖՈՆԻՆԻ ԲԻՐՈ
Իմենցեր Ն. Բ. Պատկեր

Тифлисть, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռադիւրիի համար. Тиф. № 642.

Пассеж.

ՏԵԼԵՖՈՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱԳԱՑՈՒՄԸ

ԳԵՆԵԼ, ԺՈՂՈՎԱԼ և ՍԱՐԳԵԼ

ա մ ե ն տ ե ս ա կ

տիւրրիններ, խոզավորներ, մեքենաներ և ջրհաններ:

Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ

Ե Ր Կ Ա Թ Է Կ Ա Մ Ո Ր Զ Ն Ե Ր

և տնակներ:

ՅԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՐՈՒՄՆ

(ե. հ. 2.) 88—100



49—52

М. 35,967

(5)

ПИТАТЕЛЬНЫЙ НАПИТОК

Կ Ա Վ Ո Ս

Թար նստում է միայն 4 կօպ. Բոսիկյան պատրաստութիւն

Մարմնը եւ սնունդը քաղաքի քաղաքային և արտաքաղաքային բնակարանների համար:

Чистый Какао Шоколеръ

Միակ պահանջարկային ապրանքների վաճառատն: Կովկասեան ընկերութեան ձեռք: 44—50

ՄԱՆԿԱԲԱՐԱՐՈՒՄԻ ՄԱՍՍԱԺԻՍԿԱ
ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ
Հասցէն Կրասնոգորսկայա ул. № 14. 8—21

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ռ. և 1 ռ. 50 կ.:



ՊԻՓԼԻՍԻՆԻՆԻ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփու: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՁՈՒՐ ԿԱԹԸ

Երեսին քննութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արիւ պատճառած սևութիւնը, մուկերը, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Չափվում են բոլոր պարֆիւմերական և զեղաւաճառական խանութներում: Դիտաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Քիֆիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեսեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միլայեան փողոց և Բազում. նաև Միլայեան կամուրջի վրա, Գապովի և Արխատալովի դեղատներում: Օտարաբաղաւորների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: 60—100